



Maleki = արքայական, բառերէն կը ստուգաբանէ (անդ, էջ 157):

2. Աճառեան կը հակառակի արարեղէն malik (իշխան) ստուգարանութեան եւ կ'ընդունի Ադոնցի վարկածը, այս է ստորեղէն малхазн = իշխան բառէն ծագում առած է մալխազ (Ադոնց Ն., Армения въ эпоху Юстиниана, Петербург, 1908, էջ 400 եւ Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւան 1933, Գ., էջ 774. հմմտ. եւ Մալխասեան, Հայերէն բացատրական բառարան, Երեւան 1944, Գ., էջ 244):

3. Ն. Ակինեան այս բառին (մալխազ) իմաստը լուծումի կարօտ կը համարի: Կը հաւաստէ թէ Մ. Խորենացիին ալ այդ յորջորջումը անհասկնալի եղած է, նաեւ Ագաթանգեղոսի յոյն թարգմանիչին: Ապա Ադոնցի վերոյիշեալ ստուգարանութիւնը նկատելէ յետոյ կը յաւելու՝ «Եթէ գոյութիւն ունի ստորեղէնի մէջ մալխազու բառը անհնգումը արարեղէն մեկը բառէն, դըժուարաւ կրնայ համեմատութեան առնուել Հայերէն մալխազին հետ, որ շատ հին բառ կ'երեւայ: Ինձ կը թուի թէ մալխազ, մալխազութիւն պետական աւագ գործակալութեան մը յորջորջանքն է, որ հազարապետութեանէն ետքը երկրորդ պատուաւոր բարձն եղած կ'երեւայ եւ տոհմային ժառանգութիւնն է Խորխոռունեաց իշխաններուն կամ տանուտէրներուն: Թերեւս եղած ըլլայ տիրոջ որ Հայաստանի ելեմտից պաշտօնէին եւ կամ զլիսաւոր մաքսապետին. այս իմաստը կը թերագրեն հետեւեալ տեղիքները... Գարջոյլ մալխազ կ'ուղարկուի Վաղէս կայսեր, ապա Շապուհ թագաւորին բանակցելու պետական կարեւոր հարցերու մասին, երկրորդ զէպքին մէջ յատկապէս Հայաստան ենթարկելու Շապուհ գերիշխանութեան՝ հարկատուութեամբ: Գատիչոյ մալխազ կ'ամբաստանէր Պերոզի առաջ Գիւտ կաթողիկոսը թէ առեւտրական յարաբերութիւններ կը մշակէ Յունաց հետ: Հասանօրէն իբր 546—556 են, երբ հազարապետութիւնը, գատաւորութիւնը եւ հարկաւարութիւնը առնուեցան Հայերէն եւ յանձնուեցան պարսիկ գործակալներու, զաղբեցաւ նաեւ մալխազութիւնը» (Եղիշէ վարդապետ եւ իւր պատմութիւնն Հայոց պատերազմի, Վիեննա 1936, Բ., էջ 477—478):

4. Ակինեանի վարկածը թէ Խորխոռուն-

նիները կրնան ելեմտից պաշտօնեաներ եղած ըլլալ կրնայ Ղափանցեանի վերոյիշեալ արտայայտութեամբ աւելի ամբանալ: Նմանապէս հաւանական է որ 546—556ի շրջաններուն անոնք կրնան մալխազութեանէ զրկուած ըլլալ, զի անկէ վերջ Խորխոռունիներու անուան կից «մալխազ» էջ նշանակուած եւ բառն ալ վարկարկելի (ցոփ, լիտի) իմաստն առած է:

5. Կարելի է հոս աննկատ թողուլ Հ. Ալիշանի վարկածն ալ որ Ագաթանգեղոսի յոյն թարգմանութեան եւ Շապուխայանի ժողովի կանոններու Ձեռագրի մը վրայ յեցած է, որոնց համաձայն մալխազութիւն բառին տեղ դրուած է խաղաղութիւն, խաղարարութիւն (Արարատ, էջ 420—421 եւ Հանդ. Ամս. 1949, էջ 144): Արդ Հ. Ալիշան կ'ընդունի թէ Խորխոռունիները թիկնապահներն եւ միանգամայն խաղաղութեան պաշտօնեաներ: Անոնք հայկական թագաւորութեան բարձումէն յետոյ անձնապահ (ապետ) պաշտօն մը չունէին, բայց իբրեւ խաղաղարար եւ խաղաղութեան պաշտօնեայ կրնային օգտակար ըլլալ, թէեւ խոսվարարներ եղան Գաղիչոյ եւ Գարջոյլ:

Ամփոփելով ըսուածները էջ կարելի մերժել որ Խորխոռունիները բարձր աստիճան չունէին եւ թիկնապահ էին: Կրնան խաղաղութեան եւ նմանապէս ելեմտաբեր պաշտօնեաներ եղած ըլլալ: Վարդանանց եւ Վահանեան շրջաններուն իրենց մալխազութեան տիրոջը կը պահէին, զի քաղաքական պարագաները կրնային փոխուել եւ իրենք կրնային իրենց պաշտօնը շարունակելու վրայ պնդել: Սակայն երբ Հայաստանի անկախութեան յոյսերը կ'անհետանան, անոնք կը մնան լոկ իշխաններ, բայց միշտ պատրաստ հայրենիքին ծառայելու:

3. ԽՈՐԽՈՐՈՒՆԵԱՆ ԵՐԿՐԸ  
Խորխոռունեաց հայրենիքը Տուրուբերանի ժ.Ձ. գաւառն է, որուն մասին գրեթէ տեղեկութիւն չունինք<sup>4</sup>: Կրնայ ըլլալ որ ա-

<sup>4</sup> Հ. Ինձիճեան կը գրէ՝ «Ինձ թուի թէ Մալխազ եւ իւր սերունդը միայն զպաշտօն թիկնապահութեան շահաց, այլ երկիր նոցա էր առաջին երկիրն Խորխոռունեաց, յորմէ ի հարկէ ունէին իւրեանց հաս եւ ման կ'արտայայտուի՝ «Բայց չեմ ըմբռներ թէ ինչպէս կ'որի եւ Խորխոռունիք, եթէ Ագահունեաց կից էին, կրնային միանգամայն պարսկական Բուլանըք»

նոնցմէ մաս մը կամ ճիւղ մը Տաշիրը գաղթած ըլլայ (Ինձիճեան, Ստորագրութիւն, էջ 132 եւ Վարդան Արեւելցի, Պատմ. Հայոց, էջ 90):

Խորխոռունիները վանք մը ունէին Ս. Երկրին մէջ (Ալիշան, Հայաստանում, էջ 227): Անոնց եպիսկոպոսները բաւական ուշ կը յիշուին եւ այդ ապացոյց է անագան հաստատութեան ու կարգադրութեան<sup>5</sup>: Ծանօթ են Ադան, Մաշտոց, Մովսէս ու Յեսու կամ Յեշու եպիսկոպոսները (Գիրք թղթոց, էջ 41, 70, 73, 78, 81, 196. Ուխտանէս, Պատմ., Բ., էջ 64. Չարբհանէլեան, Պատմ. Հայ հին Դպր., էջ 795): Դարձեալ՝ Նարկիսոս եւ Գրիգոր եւ Դաւիթ եպիսկոպոսները (Օրմանեան, Ագգապատմ., էջ 839, Տաշեան, Մայր ցուց. հայ. Ձեռ. Մատ. Ի Վիեննա, էջ 654, Արարատ, 1897, Թուղթ Անանիա Կաթողիկոսի):

3. ԽՈՐԽՈՐՈՒՆԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Հակառակ անոր որ Խորենացին Խորխոռունեաց նախարարութեան ծագումը այնքան հին կը յիշատակէ, անոր առաջին ներկայացուցիչը<sup>6</sup> կը դնէ Վաղարշակ Արշակունի թագաւորի օրով «Եւ գլուխ նահապետ նոցա զՄալխազ ոմն (Պատմ. էջ 167): Եւ ապա նորէն շատ ուշ Խորխոռունի աստեան կը յիշէ ԳԱՐՁՈՅԼ Մախազ նահապետ Խորխոռունեաց (անդ, էջ 416): Ան կը նշանակուի գորավար փոխանակ Միհրանի (անդ, էջ 416): Բայց անկէ առաջ Ագաթանգեղոս միշտապէս իրենէ անանուն Խորխոռունիի մը, որ Գրիգոր Լուսաւորչի շքադիր է դէպի Կեսարիա «հնգետասներորդ իշխանն Մալխազութեան տանն» (Պատմ. Վեներաիկ 1835, էջ 597):

Գուցէ Գարջոյլի որդին ըլլայ ՍՈՒՐԷՆ Խորխոռունի, որ Սահակ ասպետի համախոհ ու գործակից է եւ կը ցանկայ «Փախչել Արշակայ եւ անկանիլ առ Խոսրով» (Սոր., Պատմ., էջ 493): Եւ Սուրենայ Խորխոռունի-

Լեյի կողմէն ըլլալ, ուր կը դնէ զանոնք Ալիշան (հմմտ.) Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա 1907, էջ 198): Մինչ Գ. Ասլան կ'ըսէ՝ «Elle (la famille des Khorkhoronis) possédait un canton de la Taronite sur le bord du lac de Van» (Etudes Historiques sur le peuple Arménien. Paris 1928.  
<sup>5</sup> Թէեւ Ուխտանէսի համաձայն Գր. Լուսաւորչի հաստատում (Պատմ., Վաղարշապատ 1871, էջ 100):  
<sup>6</sup> Խորխոռունիներու նախահայրն է ԽՈՐ (հմմտ. վերը):

նոյ, Վահանայ Առաւելեղիին եւ Աշխաղարայ Դիմաքսենի. գտեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձան Արշակայ յամբողջ Հանոյ տանել յաշխարհն Ծոփաց, զոր յախշտակեալ եւ կամեցեալ անցանել առ Խոսրով, ոչ ժամանեցին»: «Վասն զի Սամուէլ Մամիկոնեան զանոնք շատ նեղ կացութեան կը մատնէ «արկանէ յամուր այրս ի գաւառին Մանանաղոյ», մինչեւ որ Սահակ ասպետ օգնութեան փութալով «հանէ զՍուրէն եւ զՎահան եւ զԱշխաղար հանդերձ զանձիւքն, փոյթ ընդ փոյթ հասուցանէ առ Խոսրով» (անդ, էջ 495—497): Կը վարձարուին զիւղեր ու դաստակերտներ ստանալով (անդ, էջ 497):

Փաւստոս Բուզանդի մօտ բաւական ստէպ Գարջոյլի կը հանդիպինք: Ան մէկն է այն նախարարներէն, որոնք Արշակ թագաւորէն Վաղէս կայսեր կ'առաքուին<sup>7</sup> (Պատմ., Վեներաիկ 1933, էջ 113): Յետագային անոր շատ կարեւոր գործ մը կը յանձնուի եւ ան գիտէ իր վրայ դրուած յոյսերը արդարացնել: Բուզանդ ընդարձակօրէն կը պատմէ: «Ապա յետ այսորիկ առաքելին Չարմանդուխտ տիկինն Հայոց եւ սպարապետն Մանուէլ զԳարջոյլ Մալխազ եւ ընդ նմա զբաղումս ի նախարարացն Հայոց հրովարտակօք ընծայիւք եւ պատարագօք առ թագաւորն Պարսից զի ի նա ձեռս տայցեն եւ գնա պաշտիցեն... Եւ չոգան հասին Գարջոյլն եւ որք ընդ նմայն էին, ի դուռն թագաւորին Պարսից... Ետուն նմա զյղեալ պատգամսն հնազանդութեան: Եւ յորժամ ետես գնոսա թագաւորն Պարսից, մեծաւ խնդութեամբ ընկալեալ գնոսա, եւ մեծապէս պատուեաց գնոսա եւ մեծաւ պարգեւաւ առ նէր զԳարջոյլ: Եւ ընդ նմա առաքէր յերկիրն Հայոց զՍուրէն պարսիկ մի ճոխ ի նախարարաց զարման հազարան...» (Պատմ., էջ 248—249):

Գարջոյլ Մանուէլ Մամիկոնեանի հաւատարմ ու ժիր գործակիցը կը մնայ միշտ, բայց Մերութան Արժրուելիի զէմ մղուած վերջին պատերազմին մէջ արկածով կը մահանայ՝ «Սոյնպէս եւ զԳարջոյլ Մալխազ ձին հանայ»

<sup>7</sup> Մերոզ Երէց զինքը կ'անուանէ՝ «Գարջոյ մասնայն նահապետն Խորխոռունեաց» (Վարք Ս. Ներսէսի Պարթևի, 2., Ստեփան, Վեներաիկ 1853, էջ 52):  
3



